ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1511 - Ա

ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎԱՆ ԿԱԿԱՎԱՅԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՅՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝

2022 թվականի դեկտեմբերի 22-23-ը Վրաստանի մաքսային ծառայության ղեկավար Լևան Կակավայի գլխավորած պատվիրակության Հայաստանի Հանրապետություն այցի կապակցությամբ՝ ծրագրով նախատեսված արարողակարգային և այլ միջոցառումների կազմակերպման ու անցկացման ծախսերը՝ 7,794.3 հազար (յոթ միլիոն յոթ հարյուր ինսունչորս հազար երեք հարյուր) դրամի սահմաններում, կատարել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի գծով «Հարկային և մաքսային ծառայություններ» միջոցառման համար նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի:

Թույլատրել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին 2022 թվականի դեկտեմբերի 20-ից հետո ստանձնել ֆինանսական

պարտավորություն՝ վերոհիշյալ միջոցառման շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

21.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ